



Հաստատված է՝
Հայաստանի Հանրապետության փաստաթղթերի
պալատի նախագահ
Արա Զոհրաբյանի 28.09.2016թ. թիվ 416-Լ որոշմամբ

* * * * *

Կ Ա Ր Գ

«30 ՓԱՍՏԱԲԱՆԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵԶԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգն ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 13-րդ հոդվածի ութերորդ մասի պահանջին համապատասխան և սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կողմից Ռայմոն Եզեգեյանից (**այսուհետ՝ Բարերար**) տրամադրվող նվիրաբերության գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները:
2. «Ռայմոն Եզեգեյան» թոշակի շահառու է համարվում սույն կարգին համապատասխան որոշված փաստաբանը (**այսուհետ՝ Շահառու**):
3. Շահառուների քանակը չի կարող գերազանցել 30-ը (երեսունը) (**այսուհետ՝ Շահառուների քանակ**):
4. «Ռայմոն Եզեգեյան» թոշակը նախատեսում է մեկ Շահառուի համար մեկ տարվա անդամավճարի վճարում, որպես՝ կանխավճար:

* * *

II. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Շահառուներին որոշելու համար ձևավորվում է ժամանակավոր հանձնաժողով (**այսուհետ՝ Հանձնաժողով**) հետևյալ կազմով՝
 - Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար,
 - Պալատի գանձապահ,
 - Բարերարի ներկայացուցիչ:

6. Հանձնաժողովը՝
 - ստուգում է Շահառուների թեկնածուների համապատասխանությունը սույն կարգի պահանջներին.
 - հաստատում է Շահառուների ցանկը և ներկայացնում է Պալատի ֆինանսական տնօրենին:
7. Շահառուներ կարող են լինել Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզից երեքական փաստաբան, որոնց թեկնածությունը ներկայացված է սույն կարգի 8-րդ կետում նշված կարգով:
8. Յուրաքանչյուր մարզից երեքական փաստաբանի թեկնածությունը ներկայացնում է մարզի համակարգողը, իսկ եթե համակարգող ընտրված չէ, ապա՝ նախկին մարզային համակարգողը (սույն կարգի իմաստով այսուհետ՝ Համակարգող), հաշվի առնելով՝
 - 8.1. թեկնածուի նյութական դրությունը.
 - 8.2. թեկնածուներին մարզի տարբեր քաղաքներից կամ բնակավայրերից ներգրավվելու անհրաժեշտությունը.
 - 8.3. սույն կարգի 10-րդ կետում նշված հանգամանքները:
9. Շահառու կարող է լինել Համակարգողի կողմից առաջարկվող և սույն կարգի պահանջներին բավարարող այն փաստաբանը, ով **մինչև 2016 թվականի հոկտեմբերի 6-ը (ներառյալ)** դիմել է Հանձնաժողովին և Հանձնաժողովի կողմից ընդգրկվել է Շահառուների ցուցակում: Շահառուների ցուցակում ընդգրկվելու հարցը Հանձնաժողովը քննարկում է Համակարգողի գրավոր առաջարկի և Շահառուի (Շահառուների) գրավոր դիմումի հիման վրա:
10. Շահառու չի կարող լինել այն փաստաբանը, ով՝
 - 10.1. ունի անդամավճարի չմարված պարտավորություն.
 - 10.2. 2015 կամ 2016 թվականներին ընդգրկվել է Բարերարի սահմանած նվիրաբերության այլ շահառուների ցանկում.
 - 10.3. հանդիսանում է Փաստաբանների պալատի աշխատակից կամ մարմնի անդամ:
11. Շահառու հանդիսացող փաստաբանի արտոնագիրը կասեցնելու կամ դադարեցնելու դեպքում՝ կասեցման կամ դադարեցման պահին չմարված կանխավճարի չսպառված մնացորդը փոխանցվում է սույն կարգին համապատասխան որոշված մյուս փաստաբանին: Սույն կանոնը գործում է նաև այն դեպքում, երբ Շահառու հանդիսացող փաստաբանը անդամավճարից լրիվ կամ մասնակի ազատվելու արտոնություն է ձեռք բերում:
12. Շահառուների ցուցակի հիման վրա Շահառուին հանձնվում է «**փաստաբան Եզեզեյանի 2016 թվականի թոշակ**» անվանակարգով հավաստագիր:

* * *

III. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

13. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2016 թվականի սեպտեմբերի 29-ից:
14. Սույն կարգով նախատեսված Շահառուների ցուցակը պետք է ներկայացվի մինչև 2016 թվականի հոկտեմբերի 7-ը:
15. Սույն կարգը կարող է փոփոխվել կամ լրացվել Պալատի նախագահի որոշմամբ:

* * *